



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թի 1831
Յուլիս 1, 1994

Արժանաշնորհ
Տ. Տիրան Ա. Քհնյ. Փափագեան
Հովի Ա. Յովակիմ եւ Աննա Եկեղեցոյ
Փէյրս Հայթց.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենք Մայիս 8 եւ Յունիս 8, 1994 թուակիր ձեր գոյգ նամակները, որոնցմով կը դիմէք մեզի՝ որպէս զի հովուական պատասխանատուութիւններէ զերծ կացուցանենք ձեզ, եւ փափաք կը յայտնէք Յուլիս 1-էն սկսեալ հանգստեան կոչուիլ:

Ձեր պարագան նկատի առնելով որոշեցինք ընթացք տալ ձեր դիմումին: Սակայն ցնոր տնօրինութիւն, կը յանձնարարենք որ որպէս այցելու հովի Ա. Յովակիմ եւ Աննա Եկեղեցոյ՝ շարունակէք մասնակի ժամերով հոգ տանիլ համայնքի հոգեւոր կարիքներուն:

Այս առթիւ կը փափաքինք մեր խորին շնորհակալութիւնն ու երախտագիտութիւնը յայտնել ձեզի՝ Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմին մէջ երկար տարիներու ձեր հաւատարմութիւն եւ օգտակար ծառայութեանց համար: Որպէս Հայ Եկեղեցոյ նուիրեալ սպասաւոր՝ դուք ձեր գիտութիւնն ու կարողութիւնները ի սպաս դրիք Եկեղեցոյ պայծառութեան եւ ձեր խնամքին յանձնուած հօտի բարօրութեան համար: Թող Տէրը վարձահատոյց ըլլայ ձեզի:

Ձեզի եւ ձեր հարազատներուն կը մաղթենք առաւել քաջատոյջ եւ երկար տարիներ:

Սիրոյ ողջունի

Խաչագոյ Արք. Պարսեան

ԽԱՇԱԿ ԱՐԻ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ